

ԱԿՆԱՐԿ ՈՒՏԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Գ. Ռ.

Անդրկովկասը վաղ ժամանակներից ի վեր հայտնի էր ազգային կազմի խայտաբղետությամբ և բազմաթիվ լեզուների, կրոնական հավատքների, տարբեր կենցաղի ու սովորությունների առկայությամբ: X դարի արաբ ճանապարհորդ Ալ-Բսթահրին նշել է, որ «Պարտավը /Դերբենտ - Գ. Ա./ բնակեցված և շրջապատված է տարբեր ազգությունների պատկանող տարալեզու, միմյանց նկատմամբ թշնամանքով լցված, բուզմաքանակ մարդկանցով, որոնց ազգային տեսակն անցնում է 70-ից»¹: Նշված թիվը գուցե չափազանցություն լիցի, բայց իրողություն է:

XIX դ. ևս, չնայած Անդրկովկասի տարածքի սահմանավակվածությունը, այնտեղ բնակվում էին բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ, որոնք միմյանցից տարբերվում էին ոչ միայն ծագումով, լեզվով, այլ նաև՝ քաղաքակրթության զարգացման աստիճանով: Այդպիսին էր նաև Անդրկովկասի մասը կազմող Գանձակ-Ելիզավետպոլի գավառը, հետագայում՝ նաև նահանգը, ուր շատ ժողովուրդների ու ցեղախմբերի կողքին ապրում էին նաև ուտիները կամ ուղիները: Նրանց անունով էլ իրենց ապրած երկրամասը նախկինում կոչվել է Ուտիք. այն եղել է Մեծ Հայքի թագավորության 15 աշխարհներից մեկը: Մովսես Խորենացու վկայությամբ, «...զի զցեղս զայս մեծ և անուանի... զգուռնն որ ի Ախսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից...»² սորա զաւակաց ասեն սերեալ զազգն ուաէացւոց և Գարդմանցւոց...»³: Ուտիք նահանգից բացի, եղել է նաև Ուտի անունով գավառ, որը կազմել է Ուտիք աշխարհի գավառներից մեկը: Այն կոչվել է նաև Ուտի-Առանձնակ, Ուտի-Ռոստակ: Պարտավ կենտրոնով: Այս գավառի անունով ամբողջ նահանգը կոչվել է Ուտիք⁴: Մեկ այլ սկզբնաղբյուրում Ուտիքում հիշվում է յոթ գավառ՝ «Առան-Ռոտ, Տրի, Ռոտ-Պարսեան, Աղուէ, Տուս Բստակ, Գարդման, Շակաշեն, Ուտի Առանձնակ»⁵ յորում Պարտավ քաղաքը⁶: Ինչպես տեսնում ենք, նշված տեղանունները հնագույն ծագում ունեն. Սևանա լճի ափին պահպանված Ծովինար ամրոցի պատին փորագրված սեպագիր արձանագրություններից մեկում նշված է, որ Արգիշտի I-ի որդի Սարգուր II-ը / 764-735թթ./ Սևանա լճի հարավային ափերը նվաճելուց հետո շարժվել է Արևելք և գրավել Ուրտեխե ու էթիունի աշխարհները, որոնք հետագայում լեզվական աննշան փոփոխություններ կրելուց հետո պետք է կոչվեին Ուտիք և Արցախ⁷: Մ. թ. ա. V դարի հույն հռչակավոր պատմաբան Հերոդոտոսի վկայությամբ,

¹ Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК), вып. XXIX, Тифлис, 1901, стр. 14-15.

² Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, գիրք երկրորդ, էջ 113:

³ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե., 1969, ծանոթ. N 125:

⁴ Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, Ե., 1981, էջ 34:

⁵ Նույն տեղում, էջ 5-6:

Պարսկաստանին Հարկատու նահանգների ցուցակում ուտիններն ընդգրկված էին 14-րդ նահանգի մեջ: Իսկ մի այլ առիթով նա նշում է, որ մի շարք ցեղերի Հետ (մյուսներ, պարիկաններ) ուտինները ծառայում էին Դարեհ արքայի որդու՝ Արսամենեսի զորագնդում⁶:

Հնում Ուտիքը կոչվել է նաև «Գարգարացվոց աշխարհ»: Ստացվում է, որ այնտեղ Հայերի Հետ մեկտեղ բնակվում էին աղվանական ցեղախմբեր /ուտիններ, գարգարներ, գարգամանացիներ և այլն/, որոնք ժամանակի ընթացքում ձուլվեցին Հայերի մեջ: Բացառությամբ էին ուտինները, որոնք գոյատևեցին մինչև մեր օրերը⁷:

Ուտինները, Հայերի Հետ միասին, քրիստոնեություն ընդունեցին IV դ. սկզբներին. մինչ այդ նրանց շրջանում, քրիստոնեության տարածման քարոզչությամբ իր առաքելական գործունեությունն էր ծավալել Եղիշեն, որը նահատակվեց: Հետագայում նա ժողովրդի կողմից սրբացվեց, և «նրա պատվին՝ Նիջ, Վարդաշեն և այլ գյուղերի նախկին, Հնադույն տարածքներում կառուցվեցին վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, որոնց մնացորդները պահպանվել են ցայսօր»⁸:

Իստ Մովսես Կաղանկատվացու, երբ Աղվանքի առաջին կաթողիկոս Գրիգորիսի նահատակությունից հետո «...բարբարոսական ազգք կողմանցն արևելից վերստին ի դիցախելար կռամոլութիւնս կործանեցան. և բազում ուխտս ատրուշանաց կատարելով յարուցին Հալածանս ի վերայ քրիստոնէից»: Եվ հետագայում Սնարոյ Մաշտոց վարդապետն «Անցնելով ընդ Հայաստան՝ ճանապարհորդէ Հասանել ի սահմանս արևելից՝ ի գաւառն Ուտիական ... Եւ յայնժամ նորոգեալ զեկեղեցւոյ Հաստատէ զՀալատս: Եւ ձգէր զբարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և՛ Աղուանս, և՛ Լփին, և՛ ի Կասաւս, և՛ մինչև ի դուռն Չորայ»⁹: Մաշտոցն այստեղ գրադվել է նաև դպրության, գրականության ստեղծման ու տարածման խնդիրներով: Հայ մատենագիրների վկայությամբ, նա ստեղծել է նաև գրեր՝ աղվանական բազմաթիվ /26/ ցեղերից մեկի՝ դարդարների համար, որը, սակայն, չի պահպանվել և, ինչպես նկատել է Բ. Ուլուբաբյանը, «չկարողացավ դառնալ ընդհանրական, մյուս բոլորի համար, որպեսզի իրավունք ունենար դառնալ ամբողջ երկրի ձևն ու կաղապարը... Հետևապես, Աղվանքում չստեղծվեց նաև տեղական սեփական գրականություն, և անդրկուրյան քրիստոնեական թեմերն ընդգրկված լինելով Հայոց եկեղեցու մի թևի՝ Աղվանից (Հետագայում՝ Գանձասարի) կաթողիկոսության ոլորտի մեջ, եկեղեցում ու դպրոցում գործ ունեին Հայոց լեզվի հետ»¹⁰: Ի սկզբանե՝ V դարից ի վեր, ուտիններն օգտագործել են մեսրոպյան Հայոց այբուբենը, խոսել են իրենց լեզվաբարբառով, այնպես, ինչպես Արցախի, Լոռու, Սյունիքի, Գուգարքի, Ջավախքի և Հայաբնակ այլ վայրերի Հայությունը, որի պաշտոնական լեզուն (Հատկապես՝ գրավոր) Հայոց գրաբար և աշխարհաբար լեզուներն են: Եվ պատահական չէր, որ նաև Ելիզավետպոլի նահանգի Նուխի գավառի ուտի-Հայերը

⁶ Հ ե ռ Գ ռ Ե Մ . Պատմություն ինը գրքից /Թարգմանությունը Ս. Կրկյաչարյանի/, Ե., 1986, գիրք III, էջ 197, գ. VII, էջ 408:

⁷ Լ ե ռ , Երկերի ժողովածու, Հ. 1, Ե., 1966, էջ 161:

Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края /այսուհետև՝ МИЭБГКЗК/, т. VI, ч. II, Тифлис, 1886, с. 4.

⁸ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983, էջ 95:

¹⁰ Ուլուբաբյան Բ., Նշվ. աշխ., էջ 95, 107:

խոսում էին «ինքնատիպ Հայերենով, որը, սակայն, նման չէ Հայերենին և ոչ էլ կովկասյան որևէ լեզվախմբի: Ուտիները գրավոր լեզու չունեն, գրում են Հայերեն՝ խոսակցական իրենց լեզվով»¹¹: ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվում պահպանվել է ուտիերեն երգարան¹², որը պարունակում է 27 երգ-բանաստեղծություն: Մեկ էջի վրա գրված է Հայաստան ուտիերեն տեքստը, իսկ Հանգիստակաց էջում՝ Հայերեն թարգմանությունը: Պատմողը Վարդաշենի քահանա Մկրտիչ Մելիք-Վարդազարյանցն է, որը գրել է. «Ես բնիկ ուտեցվոց երկրեն եմ. եկեղեցական քարոզչությունը, խոստովանությունը, պսակադրությունը, խրատները և այլ արարողություններ, Վարդաշենի իմ ծխականների համար, կատարում եմ ուտիերեն լեզվով՝ մայրենի Հայերենից թարգմանված»¹³: Այս երգարանի ստեղծման շարժառիթը հետևյալն էր. Միլիկյանների ուտիական Հայտնի գերդաստանից Ալեքսանդր Միլիկյանի ավագ որդին՝ Հայրապետը, Պետերբուրգում ուսանելիս Մ. Մելիք-Վարդազարյանցին Հայերեն նամակով /15. I. 1877թ./ գրել է. «Գթառատ Հայր իմ... ես իմ մանկությունից պարապել եմ Հայկական մայրենի լեզվով... իսկ ուտիերենը մաքուր չեմ տիրապետում... խնդրում եմ, ինձ ուղարկել այդ լեզվով /ուտիերեն/ երգեր ու բանաստեղծություններ, եթե, իհարկե, կան»¹⁴: Նկատելի է այն, որ երգարանի կազմողը և Հ. Միլիկյանը միմյանցից անկախ գրել են «Հայկական մայրենի լեզվով» միտքարտահայտությունը, ինչը դալիս է Հաստատելու, որ նրանք իրենց Հայ էին զգում ու անվանում, կրում էին Հայկական անուններ և ազգանուններ: Եվ չնայած ռուս ուսումնասիրողներից ոմանք ուտիերեն դասել էին լեզգիական ցեղախմբերի մեջ, իսկ ոմանք էլ նրանց Համարում էին Հին աղվանների նոր սերունդներ, սակայն ելնելով փաստացի իրավիճակից, գրում էին. «այժմ ուտիները հիմնականում խոսում են Հայերեն և իրենց Հայ ճանաչում, մոռացել են իրենց ծագումը»¹⁵:

1893թ. Վարդաշենի քահանա Սիմոն Բեժանյանի նախաձեռնությամբ «Աստվածաշունչը» Հայերենից թարգմանվեց Հայաստան ուտիերենի: Բացի այդ, նա օգնեց եղբորը՝ Միքայել Բեժանյանին, Հավաքելու ուտիական ժողովրդական երգերը, Հեքիաթները, ասացվածքները և ազգագրական այլ նյութեր, ինչպես նաև նրան աջակցեց կազմելու ուտիերեն բառարան¹⁶:

Ուտի ազգախմբի ծագման, ազգային պատկանելության, լեզվի և այլ հարցեր բազմիցս հետաքրքրել են Հայ, ռուս, եվրոպացի և այլ գիտնականների, որոնք Համապատասխան հոգվածներով ու կարծիքներով Հանդես են եկել 1814, 1842, 1863, 1895թթ.: 1842թ. գրվեց աղվանական լեզվի քերականության մասին՝ «Начальные основания грамматики на агванском языке» /писанные армянскими буквами/¹⁷: Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանցն իր ուսումնասիրություններում անդրադառնում է ուտիների պատմությանը և որպես ժամանակակից տալիս է նաև նրանց բնութագրերը. «... Հարկ է Հայտնել, որ Հայկական են իւրեանց ծագման աւանդութիւնն, դիմագծերն, սովորութիւններն

¹¹ МИЭБГКЗК, т. VI, ч. I, с. 4.

¹² ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 57, ց. 1, գ. 193, թ. 4-25:

¹³ Նույն տեղում, թ. 14:

¹⁴ Նույն տեղում, թ. 26:

¹⁵ Науменко Е., Елисаветпольская губерния /Военно-статистическое описание/, Тифлис, 1903, с. 310-311.

¹⁶ СМОМПК, вып. XXX, ч. I, Тифлис, 1902, с. I.

¹⁷ Նույն տեղում:

և ամենայն ինչ, որոց շատերն բացի իւրեանց լեզուից ղիտեն և Հայերէն...»¹⁸ :

1903թ. Ա. Դիրրի Հեղինակությամբ լույս տեսավ «Грамматика удинского ЯЗЫКА աշխատությունը»¹⁹ : Առաջաբանում Հեղինակն իր երախտագիտությունն ու շնորհակալությունն է հայտնում Վարդաշենի բնակիչներ Սողոմոնյանցին, Մնացականյանցին և այլոց՝ այդ դժվարին գործում նրանց ցուցաբերած սրտացավության, ուտիներենի իմացության, գիտական աջակցության համար²⁰ : Սակայն այդ ջանքերն ուշացած էին, որովհետև ուտիները համարյա ձուլվել էին տեղի ժողովուրդների, մեծ մասամբ Հայերի մեջ և չուտով դադարեցին գոյություն ունենալուց :

Ելիզավետպոլի մարզում, Հետագայում նաև Նույնանուն նահանգում, ուտիները բնակվում էին Նուխի գավառի Վարդաշեն, Նիջ կամ Նիժ բնակավայրերում, որոնք միմյանցից հեռու էին 40 մղոնով : Որ ուտիները վաղ ժամանակներից ի վեր իրենց Հայ են անվանել, երևում է նաև մեզ Հետաքրքրող ժամանակաշրջանի /XIX դ./ սկզբնաղբյուրներից մեկից. «Նուխի գավառի երկրորդ, մարդաշատ ազգությունը հայությունն է. հայերն այստեղ իրենց լեզվով, սովորություններով, կենցաղով ու պատմական ճակատագրով միատարր չեն, հատկապես իրենց ուտիներ անվանող հայերի խումբը»²¹ :

Վարդաշենը մեծ բնակավայր էր : Այն բաղկացած էր Վարդաշեն և Կչախ-Վարդաշեն գյուղերից, ուր ապրում էին ուտիներ, հայեր, թաթարներ, Հրեաներ և ուրիշներ : Ուտիները, մոտիկից առնչվելով նշված ազգություններին, խոսում էին նաև նրանց լեզուներով, որի հետևանքով բուն ուտիներն համեմվում էր այդ լեզվախմբերի բառերով, դարձվածքներով, ասույթներով : Չնայած ուտիները կրում էին նրանց մշակույթների, կենցաղի ու սովորույթների ազդեցությունները, շատ ավելի հակված էին դեպի Հայկականը : Այսուհանդերձ, ուտիների մի մասն ընդունեց ուղղափառություն : Մ. Բարխուտարյանցի վկայությամբ, «1820թ. 117 ընտանիք ևս ընդունած են յունադավանություն : Այժմ ուտիներից անխախտ մնացած են ի Մոց Հայաստանեայց Առաքելական եկեղեցու 12.102 անհատ, որ բնակվում են Նիժ, Վարդաշեն, Սուլթան Նուխի գիւղաքաղաքներում» և նրանց չրջակա վայրերում, այդ թվում նաև «Գանձակի Սարով ու Կողէն գիւղերում»²² : Ուտիների մեջ կային նաև մահմեդականներ. XIX դ. սկզբներին «Բաղստանից Ղութաշէն է գալիս Հաճի-Չալապի անուն ոմն ... սկսում է գործ դնել բռնություններ... Այս միջոցներով դարձնում է մահմեդական կրօնին Հայադաւան... չուրջ 30 գյուղեր... նաև ուտեցիներ. թվով 15480 ծուխ բռնութեամբ դառնում են մահմեդական : Տակաւին մինչև ցայսօր այդ Հայ մահմեդականների մեջ լսվում են Կարապետ, Մարտիրոս, Գրիգոր, Հարութիւն, Խաչատուր, «օղիներ» /որդի, տղա/... Հայկական անունները»²³ : Չնայած գործադրված ճնշումներին ու Հալածանքներին, ուտիների մեծ մասը մնում էր Հայադավան : Նրանք հաճախում էին Հայկական եկեղեցիներ և օգտվում դրանց հոգևոր սպասարկումից : Հայկական դպրոցներում նրանց երեխաներն ստանում էին Հայեցի կրթություն ու դաստիարակություն : Նուխի գավառը հարուստ էր

¹⁸ Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 18:

¹⁹ СМОМПК, 661п. XXX, ч. I, Тифлис, 1902, с. I.

²⁰ Նույն տեղում:

²¹ МИЭБГКЗК, т. VI, ч. I, с. 1-2

²² Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, Հ. Ա., Թիֆլիս, 1901, էջ 19:

²³ Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 291-292:

Հայկական վանքերով, եկեղեցիներով, ուխտատեղերով, որոնք մշտապես գավառի քրիստոնյա տարրի գոյության և Հարատևման Հենարան էին: Նշանավոր էին Գիշ, Զալեստ, Վարդաշեն, Նիջ և այլ վայրերի սրբատեղերը, ուր այցելում էին բազմաթիվ Հավատացյալներ²⁴: Վարդաշեն գյուղի վերին մասում երեացող չինարի ծառի մասին պահպանվել է մի գեղեցիկ ավանդություն: Այդ Հսկա ծառի բունը 32 արշին տարածք էր զբաղեցնում: Երբ քրիստոնյաները Հետապնդվում են թաթար մահմեդականներից, սուրբ ավետարանը փրկելու համար թաղում են Հողի մեջ, և որպեսզի տեղը չկորցնեն, վրան չինարի մի ճյուղ են տնկում: Հետագայում այն աճում է, մեծանում և ժողովրդի կողմից սրբանում: Այստեղ զոհեր էին մատուցում, շուրջը մոմ վառում, աղոթք անում: Խնամելիս չորացած ճյուղերն ու տերևներն անգամ, զգուշությամբ Հավաքում և օգտագործում էին մատաղր եփելիս²⁵:

Ուտի բնակչությամբ Հայտնի Նիջ Նիժ/ գյուղը բնակչության թվով (4554) Գարասու չրջանի երկրորդ խոշոր բնակավայրն էր, վերջիններիս գերակշիռ մասը Հայեր և ուտիներ էին, իսկ մնացածը՝ թաթարներ: Նիջցիները զբաղվում էին այգեգործությամբ և Հողագործությամբ: Նրանք իրենց Հարևաններից տարբերվում էին աշխատասիրությամբ և ստացված գյուղատնտեսական մթերքների արդյունքներով մշտապես առաջինն էին գավառում: Նրանք աչքի էին ընկնում նաև մտավոր զարգացմամբ, մաքուր ու գեղեցիկ կենցաղով: Օժտված լինելով բնատուր քաջությամբ և համարձակությամբ՝ նրանք տրտնջալու փոխարեն Հաջողությամբ պաշտպանվում էին Հարևան քուրդ ու թաթար ցեղերի ավազակային Հարձակումներից: Տեղի ուտիների բարերար ազդեցությամբ Նիջում բնակվող 70 ծուխ թաթարները, մյուս չրջաններում ապրող թաթարների Համեմատությամբ, խաղաղասեր էին²⁶:

Նիջ գյուղն աչքի էր ընկնում իր արտաքին տեսքով: Տների մեծ մասը քարաշեն, բարեկարգ, կղմիղրե տանիքներով, արտաքինապես գեղեցիկ ձևավորված ու Հարգարված բնակարաններ էին, որոնք չրջապատված էին փայտե կամ քարե պատենշ-պարիսպներով: Կից այգիներում աճեցնում էին թթենիներ և մրգատու այլ ծառատեսակներ: Աշխատասիրության հետ մեկտեղ, նիջցիներն աչքաբաց, խելացի ու գործարար մարդիկ էին: Նրանցից շատերն ունեին բավարար միջոցներ և Հարյուրավոր դեպատին ջրովի վարելահողեր ու անասուններ: Գյուղում գործում էր 30 ջրաղաց և 24 բրնձի դինգ, որոնք ծառայում էին նաև չրջակա բնակավայրերին: Նիջը խճուղային ճանապարհով կապված էր չրջակա գավառների: Զաքաթալայի, Նուխի, Արեշի, ինչպես նաև Եվլախի երկաթուղային կայարանի հետ: Մեկ այլ ուղի սկսվում էր Նուխի քաղաքից և ճյուղավորվելով մտնում էր Նիջ և Հարևան Բադար, Վարդանլի բնակավայրերը²⁷:

Ուտիներով բնակեցված էր նաև Ղազախ գավառի Կոզեն գյուղը: «Կրոզեն գիւղ, - գրել է Մ. Բարխուտարյանցը, - Կուր գետի ափում ... բուն ուտեաց մնացորդներն են գիւղիս բնակիչներն, որք ունեին և առանձին բարբառ, բայց գիտեն և Հայերեն: Մօտ 700 տուն եղած է գիւղումս, բայց այսօր մնացած է միայն 30: Գիւղիս մօտ կայ Հին գիւղատեղի ու Հանգստարան և աւերակ քարուկիր եկեղեցի: Հանգստարանի մէջ կայ մինչև 600 տարուան տապալանաբար:

²⁴ МНЭБГКЗК, т. VI, ч. I, с. 20.

²⁵ СМОМІК, 861п. XIV, Туфлус, 1892, с. 213-215.

²⁶ МНЭБГКЗК, т. VI, ч. I, с. 4-5.

²⁷ Նույն տեղում:

Արձանագրութիւններէ կերեւի, որ այստեղ ամփոփուած են թաւրիզեցի, հալէպցի, կարնեցի և ուրիշ քաղաքներէ եկած վաճառականներ. կան նաև գիւղիս իշխօղ Սնիք-Ջահանկիրի տապանաքարը և Աւետարան անուամբ ուխտատեղի մատուցածը»²⁸ : Սա վկայում է այն մասին, որ Ուտիք-Գարգմանք պատմական տարածքը տնտեսապես զարգացած, առևտրական նշանավոր երկրամաս է եղել: Կոզեն գյուղի բնակչութիւնը գնալով նոսրանում էր. 1873թ. այնտեղ կար 29 ծուխ՝ 198 երկսեռ բնակչութեամբ, իսկ 1885-1886թթ.՝ 26 ծուխ, 132 մարդ²⁹ : Նուխի գավառում, ուր հիմնականում կենտրոնացած էին ուտիները, կար 1183 ծուխ, 3711 արական, 3402 իգական բնակիչ, ընդամենը՝ 7113 մարդ: Ուտիները կազմում էին ելիզավետպոլի նահանգի բնակչութեան 1%-ը³⁰ : 1890թ. տվյալներով՝ այնտեղ կար 1217 ծուխ, 7301 /երկսեռ / ուտի բնակիչ³¹ : Իսկ 1897թ. մարգահամարի ժամանակ նահանգում ուտիների տվյալները հայերից չեն առանձնացվել, քանի որ «ուտիներն հայացել են և, որպես ազգային առանձին խումբ, աղյուսակում նրանց տվյալները չեն անջատվում հայերից»³² : Ուտիների առանձնացվելն այսպես էին պատճառաբանում վիճակագրական աշխատողները գեոևս 1880-1890-ական թվականներին:

Այսպես էլ վերացան ուտիները պատմական թատերաբեմից՝ ավելի քան 20 զար գոյատևելուց հետո:

ОЧЕРК ИСТОРИИ УТИЙСКОГО НАСЕЛЕНИЯ

АРАКЕЛЯН Г.Р.

Резюме

Исторические сведения об Утик-Ути восходят к VIIIв. до н. э. Согласно Мовсесу Хоренаци, Мовсесу Каганкатвацци и другим армянским историкам-библиографам, в IV в. наравне с армянами утийцы приняли христианство и стали считаться григорянами. Говоря на своем языке, своим письменным языком они считали армянский, носили армянские имена и фамилии, ходили в армянскую церковь. За все время своего существования они проживали на исторических армянских землях Утик и Гардманк, которые в XIX в. входили в состав той же территории, охватывающей уезд Нухи Елизаветпольской губернии и частично деревни Ниж, Вардашен и Крзен уезда Казах. Со временем утийцы ассимилировались с армянами и перестали существовать как таковые.

²⁸ Բարխուդարյան Կ., Արցախ, Թիֆլիս, 1895, էջ 59, տե՛ս նաև էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, Ս. Ղազար, 1903-1905, էջ 393:

²⁹ МИЭБГКЗК, т. VI, ч. IV, с. 19-20.

³⁰ Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа за 1886г., Тифлис, 1888, с. XI.

³¹ Նուխի՝ за 1990 г., Тифлис, 1893, с. VI /Елизаветская губерния/.
³² Свод материалов по изучению быта государственных крестьян Закавказского края, т. I, Тифлис, 1887, с. 21